ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ - ՀՀ Փաստաբանների պալատի նախագահի 14.09.2013թ. ընտրության քվաթերթիկների և ընտրողների ցուցակի տպագրության մասին

10.09.2013 16:46

Հարգելի փաստաբաններ

2013 թվականի սեպտեմբերի 10-ին, ժամը 10:00-ից մինչև 17:45-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ փաստաբանների պալատում (այսուհետ' Պալատ) տեղի ունեցավ Պալատի նախագահի 14.09.2013թ. ընտրության քվեաթերթիկների և ընտրողների ցուցակի (հերթական ընդհանուր ժողովի մասնակիցների գրանցման ցուցակի) տպագրությունը:

Տպագրվել է 1412 հատ քվեաթերթիկ (1370 հատ' ըստ ընտրողների ցուցակի' 09.09.2013թ. դրությամբ, և 42 հատ' ընտրողների ցուցակի երեք տոկոս ավել չափով), որոնք կնքվել են Հաշվիչ հանձնաժողովի կնիքով, փաթեթավորվել են պարկերում, որոնք ստորագրվել և Հաշվիչ հանձնաժողովի կնիքի ու ընտրողների ցուցակի հետ միաժամանակ տեղադրվել են չհրկիզվող պահարանում, որը պատշաճ կարգով կնքված կապարակնիքով փակվել է:

Հարգանքով

Հաշվիչ հանձնաժողովի

նախագահ Ապետնակ Պողոսյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })